Ծուշանիկ Կուրղինյան

Բլբուլին

Արի, բլբո՛ւլ, մի երգ երգենք ներդաշնակ .
Հովն օդապար լինի թող մեզ նուրբ դաշնակ .
Դու կերգես լուսնյակ սրտիդ լույս հուշեր,
Ես՝ իմ մթին, վշտոտ ճամբու սև գիշեր:

Թող զիլ հնչվի քո սիրերգը դայլայլիկ .
Արձագանք տա քեզ բույսն, աղբյուր և ալիք .
Իմ ցավատանջ երգն ըմբոստ սավառնե,
Տառապանքի հեծկլտանքով ուժ առնե:

Երբ վիրավոր ընկնես սիրուց դավաճան,
Արյուն ծորե քո աչերից ժրաջան՝
Երգի՛ր կյանքի իմաստալից մեղեդին,
Անհաշտ կռվում մեկի գահը, մյուսի դին . . .

Մեր ցավերգը հոխորտալից, ներդաշնակ,
Ապրած սրտի սև լարերը մեզ դաշնակ,
Տիեզերքի երգը երգենք լռելյայն՝
Նա է անմահ, սեր, սիրելին մեղկ, ունայն . . .

1908 թ. 19 հունվարի